01/10.1/8123-09
2009-11-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Հրայր Կարապետյանի, Արտյուշ Շահբազյանի, Լիլիթ Գալստյանի, Արմեն Ռուստամյանի և Ռուզաննա Առաքելյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ։

Ներկայացված նախագծերն ընդհանուր առմամբ ընդունելի ենք համարում և կարծում ենք, որ դրանցով լուծում է տրվում առևտրային ընկերությունների գործունեության

ընթացքում առաջացող մի շարք խնդիրների։ Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նախագծի որոշ դրույթների վերաբերյալ ներկայացնել մեր առաջարկությունները։

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է հանել բաժնետերերի ընդհանուր ժողովի կանոնադրական կապիտալի ավելացման լիազորությունը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով այն վերապահել ընկերության խորհրդին։ Առավել նպատակահարմար ենք համարում «բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ» բառերը հանելու փոխարեն հոդվածում այդ բառերը փոխարինել «իրավասու մարմնի որոշմամբ» բառերով։

2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1) 1-ին հոդվածով նախատեսված լրացումը, մեր կարծիքով, օրենքը շրջանցելու հնարավորությունը կանխարգելելու նպատակի շղարշի ներքո կարող է անհիմն կերպով ոտնահարել բարեխիղճ բաժնետիրոջ իրավունքը։ Բացի դրանից, անհնար է պատկերացնել նվիրատվության պայմանագրով օտարվող բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացումը բաժնետերերի կողմից, քանի որ նախապատվության իրավունքը ենթադրում է միևնույն պայմաններով բաժնետոմսերի ձեռքբերման իրավունք։ Ստացվում է, որ իր բաժնետոմսերը, օրինակ, իր ընտանիքի անդամին նվիրելու մտադրություն ունեցող բաժնետերն ստիպված պետք է լինի մյուս բաժնետերերին առաջարկել անհատույց ձեռք բերել իր բաժնետոմսերը։ Գտնում ենք, որ հիմնավորման մեջ նշված խնդիր-

ների լուծման նպատակով առաջարկվող մեխանիզմները լրացուցիչ քննարկման կարիք ունեն.

2) 3-րդ հոդվածը չի բխում փոքր բաժնետերերի իրավունքների պաշտպանությունից. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանափակումը պետք է պահպանել առնվազն այն դեպքերի համար, երբ կապիտալի ավելացման մասին որոշում ընդունելու իրավասությունը կանոնադրությամբ վերապահված է ընկերության խորհրդին: Հակառակ դեպքում բաժնետերերը տեղյակ չեն լինի իրենց բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման և դրա հնարավոր սահմանների մասին.

3) 4-րդ հոդվածով նախատեսված արտոնյալ դասի բաժնետոմսերի թիվը պետք է սահմանափակել հասարակ բաժնետոմսերի նկատմամբ ինչ-որ հարաբերակցությամբ.

4) 6-րդ հոդվածում նախատեսված նպատակներին հասնելու և հետագա տարընթերցումներից խուսափելու համար առավել նպատակահարմար է «, ներառյալ՝ ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով,» բառերը հանելու փոխարեն հստակ նշել, որ «Սույն մասով նախատեսված արգելքն ընկերությանը չի զրկում իր նկատմամբ պահանջի հաշվանցի միջոցով բաժնետոմսի նկատմամբ վճարում ստանալու իրավունքից:».

5) 7-րդ հոդվածով նախատեսված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածում, քանի որ վերջինով արգելվում է կոտորակային բաժնետոմսերի առկայությունը, մինչդեռ 56-րդ հոդվածի 1-ին մասի փոփոխության արդյունքում կստացվի, որ հետգնման համաձայնություն չտված բաժնետերը կխախտի այդ պահանջը: Բացի դրանից, պարզ չէ, թե բաժնետիրոջ անհամաձայնության դեպքում ինչպես են բաշխվելու ձայները.

6) 8-րդ հոդվածի փոփոխությունը պահանջում է փոփոխություն կատարել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-

րդ հոդվածի 2-րդ մասում, հակառակ դեպքում բաց կմնա այն հարցը, թե ով է որոշում ընդունում այն խոշոր գործարքների վերաբերյալ, որոնց առարկան տեղաբաշխվող հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերն են, որոնց թիվը գերազանցում է ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 50 տոկոսը։ Բացի դրանից, նախագծով լրացվող 61-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել օրենքի 60-րդ հոդվածի «բ» կետին։

3. Միաժամանակ, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները, անհրաժեշտ է՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

ա. վերնագրից հանել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը, քանի որ նախագծի տեքստում որևէ լրացում չի կատարվում,

բ. 1-ին հոդվածի վերջին «բառերը» բառը փոխարինել «բառերով» բառով,

գ. 2-րդ հոդվածը խմբագրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունում նույնպես առկա է «բացառիկ» բառը.

2) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

ա. վերնագիրը «փոփոխություններ» բառից հետո լրացնել «և լրացումներ» բառերով, քանի որ նախագծի տեքստում կատարվում են նաև լրացումներ,

բ. 1-ին հոդվածում նշել նաև օրենքի ընդունման թիվը՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի պահանջները,

գ. 1-ին, 2-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածներում «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները,

դ. 2-րդ հոդվածում հստակ նշել, թե օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի որ պարբերության «ժողովի» բառից հետո է կատարվելու լրացումը,

ե. 3-րդ հոդվածում «ենթակետում» բառը փոխարինել «կետում» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները,

զ. 4-րդ հոդվածում «վերաշարադրել» բառը փոխարինել «շարադրել» բառով, իսկ «բովանդակությամբ» բառը՝ «խմբագրությամբ» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների։

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 8-րդ հոդվածին,

է. 5-րդ հոդվածի «բ» կետի «25» և «75» թվերը փոխարինել համապատասխանաբար «քսանհինգ» և «յոթանասունհինգ» բառերով,

ը. 9-րդ հոդվածի «ա» ենթակետը հանել, քանի որ օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով արդեն իսկ նախատեսված է այդ իրավասությունը խորհրդին փոխանցելու հնարավորությունը,

թ. 11-րդ հոդվածում հստակ նշել, թե օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի որ պարբերությունից է հանվելու «բացառիկ» բառը։

Նախագծերում նախատեսված այն մոտեցումը, որով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի տարբեր հոդվածների տեքստից հանվում է «բացառիկ» բառը, հիմնավորված չէ, քանի որ դրա արդյունքում հավասարարժեք են դառնում ընկերության մարմիններին վերապահված բոլոր իրավասությունները, և, հակառակ հիմնա-

վորմամբ նախատեսված ընկերության կանոնադրությանը ճկունություն հաղորդելու նպատակի, հնարավորություն չի ընձեռում ընկերության այս կամ այն մարմնին իրեն վերապահված այս կամ այն ոչ էական իրավասություն պատվիրակել այլ մարմնի։

Փոփոխությունների տրամաբանությունը ենթադրում է որոշ դրույթների փոփոխության անհրաժեշտություն, որոնք դեռևս պահպանվում են փոփոխվող օրենքներում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունում առկա է «բացառիկ» բառը, կամ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի չորրորդ պարբերությունում խոսվում է միայն վաճառվող բաժնետոմսերի մասին։

Ելնելով վերոշարադրյալից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վարդան Արամյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-724-28.09.2009-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 112-րդ հոդվածի 1-ին մասից հանել «բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ» բառերը, իսկ «Բաժնետիրական» բառը փոխարինել «Օրենքով սահմանված դեպքում բաժնետիրական» բառերը։

Հոդված 2. Օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ եւ չորրորդ, 2-րդ մասի երկրոդ, 3-րդ մասի երկրորդ պարբերություններից հանել «բացառիկ» բառը։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Նախագիծ
Պ-724[1]-28.09.2009-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերությունում «վաճառվող» բառից հետո ավելացնել «կամ նվիրատվության կարգով օտարվող» բառերը։

Հոդված 2. Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասում «ժողովի» բառից հետո ավելացնել «, իսկ սույն օրենքով եւ կանոնադրությամբ սահմանված լինելու դեպքում՝ խորհրդի» բառերը։

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «միայն կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում եւ» բառերը, իսկ ա) ենթակետում՝ «՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում» բառերը։

Հոդված 4. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասը վերաշարադրել հետեւյալ ոբվանդակությամբ. «5. Կանոնադրությամբ առանձին դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար կարող է նախատեսվել ձայնի իրավունք։»

Հոդված 5. Օրենքի 41-րդ հոդվածի

ա) 1-ին մասից հանել «՝ Ընկերության կողմից իր բաժնետեերից հետ գնած բաժնետոմսերից» բառերը,

բ) 3-րդ մասում «25» թիվը փոխարինել «75» թվով։

Հոդված 6. Օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «, ներառյալ՝ Ընկերության նկատմամբ պահանջների հաշվանցով,» բառերը։

Հոդված 7. Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում «վերջիններս» բառից հետո ավելացնել «բաժնետիրոջ համաձայնությամբ» բառերը։

Հոդված 8. Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը վերաշարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը պետք է ընդունվի, որոշում ընդունելու պահին խորհրդի անդամ հանդիսացող բոլոր անդամների կողմից միաձայն, եթե

ա) գուքի արժեքը գործարքը կնքելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, կամ

բ) տեղաբաշխվող հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի կամ փոխարկման պայմաններով նախատեսված հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը չի գերազանցում Ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 50 տոկոսը։»

Հոդված 9. Օրենքի 67-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի է) կետում միջակետը փոխարինել ստորակետով եւ լրացնել հետեւյալ բառերը «եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.»,

բ) 1-ին մասի իզ) կետում «եւ» բառը փոխարինել «կամ» բառով,

գ) 1-ին մասի վերջին պարբերությունից հանել «կամ ժողովի որոշմամբ» բառերը,

դ) 2-րդ մասից «բացառիկ» բառը հանել, իսկ «Ժողովի որոշմամբ» բառերը փոխարինել «Կանոնադրությամբ» բառով,

ե) 3-րդ մասում «օրենքով» բառից հետո ավելացնել «կամ կանոնադրությամբ» բառերը։

Հոդված 10. Օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենքով» բառից հետո ավելացնել «կամ կանոնադրությամբ» բառերը

Հոդված 11. Օրենքի 84-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասից եւ 2-րդ մասից հանել «բացառիկ» բառը,

բ) 1-ին մասի զ) կետից հանել «կամ ժողովի որոշմամբ» բառերը։

Հոդված 12. Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «բացառիկ» բառը։

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Օրենսդրական այս առաջարկությունների նպատակն է ուժեղացնել բաժնետիրոջ սեփականության եւ այլ իրավունքների պաշտպանության աստիճանը եւ կորպորատիվ կառավարման համակարգը, ինչպես նաեւ հնարավորություն տալ բաժնետիրական ընկերությանը գործել ճկուն՝ ի դեմս իր կառավարման մարմինների եւ վերջիններիս կողմից կայացվող որոշումների։

Ըստ այդմ, քաղ.օրենսգրքի համապատասխան հոդվածներում առաջարկվող փոփոխությունների նպատակն է մեծացնել ընկերության կանոնադրության դերը՝ բաժնետերերի եւ ընկերության կառավարման մարմինների միջեւ հարաբերությունները սահմանելու գործում։

Բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենքում փոփոխությունները միտված են.

- Օրինագծի 1-ին հոդվածի փոփոխությունը առաջարկվում է այն բանի համար, որ բաժնետիրոջ նախապապատվության իրավունքի իրացումը լինի անխոցելի։ «Վաճառվող» բառի օգտագործումը կարող է հանգեցնել դեպքերի, երբ նվիրտավության պայմանագրով բաժնետերը կարող է խուսափել այլ բաժնետերերին իր բաժնետոմսերը փոխանցելուց։ Այսինք իրականում վաճառելով, սակայն նվիրատվություն ձեւակերպելով՝ բաժնետերն այլ բաժնետերերին փաստացի կարող է զրկել օտարվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքից։

- օրինագծի 2-րդ հոդվածի փոփոխությամբ վերացվում է 34 եւ օրինակ 35 հոդվածների միջեւ տարընթերցումները։ Վերջինի 6-րդ մասով մասնավորապես նախատեսվում է կանոնադրական կապիտալի մեծացման հնարավորություն նաեւ խորհրդի որոշմամբ, ի հարկե կանոքնադրությամբ նախատեսված լինելու դեպքու, մինչդեռ 34 հոդվածի 1-ին մասը այդ հնարավորությունը տալիս է միայն բաժնետերերի ընդհանուր ժողովին, ինչը լրացուցիչ չհիմնավորված դժվարություն է ստեղծում ընկերության համար։

- օրինագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է վերացնել բաց ընկերության համար լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու համար նախատեսված անիմաստ սահմանափակումը։ Առկա սահմանափակումը, որեւէ էական հարց չի կարգավորում, բացի լրացուցիչ դժվարություններ ստեղծելուց, քանի որ պահանջվում է առնվազը 2 ընդհանուր ժողովի գումարում։

- օրինագծի 4-րդ հոդվածոց առաջարկվող փոփոխությունը միտված է ընդլայնելու ընկերության կողմից ֆինասական միջոցներ ներգրավելու գործիքակազմը՝ կապված

արտոնյալ բաժնետոմսերի հետ։ Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսերի, ինչպես նաեւ ֆինանսական տարբեր գործիքներով միջոցների ներգրավման դասակարգումները գերազանցապես ֆինանսական ստանդարտների կարգավորման, այլ ոչ թե օրենքով խիստ սահմանափակումների տիրույթում է։

 Օրինագծի 5-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության նպատակն է ուժեղացնել կորպորատիվ կառավարման եւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգերը։ Առաջարկության իրացումը հնարավորություն կտա ընկերությանը իր աշխատակացիներին ընդգրկելու ընկերության կառավարման եւ շահույթի բաշխման գործընթացներում, ինչը ներկայումս միջազգային պրակտիկայում դիտվում է որպես աշխատանքի եւ ընկերության արտադրողականությունը բարձրացնելու կարեւոր միջոցներից։

 օրինագծի 6-րդ հոդվածի համաձայն. այս բառերը հանելով, օրենսդրորեն հնարավորություն է տրվում կատարել աշխարհում շատ տարածված՝ ընկերության պարտքերի ռեստրուկտուրիզացիա, որի արդյունքում ընկերության պարտատերերը դառնում են բաժնետերեր։

 օրինագծի 7-րդ հոդվածով ներկայացվող փոփոխությունը միտված է բաժնետերերի իրավունքների պաշտպանությանը։ Հոդվածի ներկայիս ձեւակերպումը, ընկերությանը հնարավորություն է տալիս առանց բաժնետիրոջ համաձայնության գնել վերջինիս բաժնետոմսը։ Առաջարկվող ավելացումը ընկերությանը զրկում է այդպիսի հնարավորությունից։

 օրինագծի 8-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության նպատակն է վերացնել օրենքի 60 եւ 61 հոդվածների միջեւ առկա անհամապատասխանությունը, որն արտահատվում է «խոշոր գործարք» հասկացության եւ դրա վերաբերյալ որոշման կայացման մեխանիզմի միջեւ։

 օրինագծի մյուս հոդվածները միտված են հստակեցնելու ընկերության կառվարաման մարմինների միջեւ իրավասությունները, մեծացնելու կանոնադրության դերը, ինչես նաեւ բխում են իրավական տեխնիկայի կանոններից։